ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անուն, ազգանուն՝**

   Անաստասիա Մակարյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

   ՀՀ վարչապետի աշխատակազմի Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակի Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ շահերի պաշտպանության վարչության գլխավոր մասնագետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

   Ֆրանսիայի Հանրապետություն, Ստրասբուրգ, 2023թ. սեպտեմբերի 19-23-ը

4. **Հրավիրող կողմը՝**

   Եվրոպայի խորհուրդ

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝**

   Գործուղման նպատակն էր ապահովել Հայաստանի Հանրապետության մասնակցությունը ԵԽ Նախարարների կոմիտեի Մարդու իրավունքների ղեկավար կոմիտեի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) դատավորներին վերաբերող հարցերով աշխատանքային խմբի 4-րդ հանդիպմանը (DH–SYSC–JC):

6. **Քննարկված թեմաները՝**

   Աշխատանքային խմբի 4-րդ հանդիպման ընթացքում շարունակվել են Եվրոպական դատարանի դատավորի թեկնածուներին ներկայացվող պահանջներին, թեկնածուների ընտրությանը և նշանակմանը, *ad hoc* դատավորների ընտրությանը, ինչպես նաև դատավորների պաշտոնավարման ընթացքում ծագող հարցերի քննարկումները, որոնց արդյունքները պետք է արտացոլվեն աշխատանքային խմբի կողմից կազմված զեկույցում՝ այն ընդունելու և ԵԽ Նախարարների կոմիտեին փոխանցելու նպատակով:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

Աշխատանքային խմբի 4-րդ հանդիպման ընթացքում շարունակվել է զեկույցի նախագծի քննարկումը: Մասնավորապես, վեր են հանվել այն գործնական խնդիրները, որոնց Եվրոպական դատարանի դատավորները բախվում են իրենց պաշտոնավարման ընթացքում և դրանից հետո: Քննարկվել են նաև *ad hoc* դատավորներին ներկայացվող պահանջներին, ինչպես նաև Եվրոպական դատավորների պաշտոնավարման ժամկետին վերաբերող հարցեր:

Զեկույցի առնչությամբ առաջարկություններ հնչեցվել են ելույթների ընթացքում, որոնք հաշվի են առնվել աշխատանքային խմբի կողմից:

8. **Ստորագրությունը, ամսաթիվը**.

27 սեպտեմբերի 2023թ.